ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԴԱՍ՝ ՇՆՈՐՀԱԼԻ ԴՊՐՈՑՈՒՄ՝ 1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Շնորհալի դպրոցի 1-ին հարթակի աշակերտները հուզիչ ու ջերմ մթնոլորտում ամփոփեցին փետրվարը՝ հիշելով ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանին:

Աշակերտներն իրենց ուսուցչուհի՝ Սուսաննա Ավագյանի հետ միասին ընթերցեցին «Ամենից լավ տունը» բանաստեղծությունը, որի ընթացքում երեխաների աչքերում կարելի էր տեսնել, թե ինչպես էր խոսքը աստիճանաբար վերածում զգացմունքների: Նրանք հասկացան, որ երբեմն մարդը հեռանում է իր տնից՝ կարծելով, թե աշխարհում կա ավելի գեղեցիկ, ավելի շքեղ ու հարմարավետ վայր: Բայց որքան էլ աշխարհը մեծ լինի, որքան էլ տները՝ հոյակապ, միևնույնն է՝ ինչ-որ բան պակասում է… Պակասում է սիրո ջերմությունը, տանծանոթ բույրը, հարազատության անբացատրելի խաղաղությունը:

Այդ պահին փոքրիկները զգացին ամենակարևորը՝ տունը միայն պատերը չեն: Տունը սերն է: Տունը արմատներն են: Տունը սիրտն է:

Թումանյանը մեզ համար պարզապես գրող չէ. նա տուն է, հիշողություն և ինքնություն: Այս դասի միջոցով մեր երեխաները մեկ անգամ ևս համոզվեցին, որ «ամենից լավ տունը» միշտ այն վայրն է, որտեղ քեզ սպասում են, որտեղ քեզ սիրում են, որտեղ ապրում է քո սիրտը:

Ամենից լավ տունը

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ
Ու ջուրն աղմկում, անվերջ փըրփըրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում,
Մի հին խրճիթում,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,

Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Թո՛ղ գնամ շըրջեմ աշխարհից աշխարհ,
Ճամփորդեմ լավ-լավ տներ տեսնելու,
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,

Գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու
Էս գորշ խրճիթից,
Էս հին խրճիթից,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»: Ու գնաց, երկար թափառեց տըղան,
Մեծ ու հոյակապ շատ տներ տեսավ,
Բայց միշտ, ամեն տեղ պակաս Էր մի բան…
Ու հառաչելով ետ վերադարձավ
Էն գորշ խրճիթը,
Էն հին խրճիթը,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:
«Գտա՞ր, զավա՛կս», հարցըրեց մայրը,
Ուրախ, նայելով իր տղի վըրա:«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն Է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»

Հովհաննես Թումանյան